ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՊՐԱԾ ԵՒ ՉԱՊՐԱԾ ՏԱՐԻՆԵՐԻ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄԸ ՎԱՐԴԳԷՍ ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ՆՈՅՆԱՆՈՒՆ ՎԻՊԱԿՈՒՄ

Մուտք

Վարդգէս Պետրոսեանն ապրեց յախուռն կեանքով։ Իր գրչի ուժով գնաց ճակատագրին ընդառաջ եւ փորձեց ճանաչել ժամանակի մարդուն։ Հիացաւ ու յուսախաբուեց, պայքարեց, ապա գտաւ մարդուն, գտաւ հէնց իր մէջ։ Անհատի պաշտամունքի տարիներից յետոյ Վարդգէս Պետրոսեանն այն եզակի գրողներից էր, որ գրական դաշտ բերեց մարդու հոգեաշխարհի քննութեան հարցերը։ Այս շրջանում լճացում ապրեց ոչ միայն մեր գրականութիւնը, այլեւ մարդկութեան բարոյական դիմագիծը։ Վարդգէս Պետրոսեանի նպատակը դարձաւ գրականութեան միջոցով մաքրել մարդու ներաշխարհը. «Պահպանել մարդկային բնաւորութեան արժէքները, որոնց սպառնում է անհետացման վտանգ»[1]։

Սոյն յօդուածի խնդիրն է գրականագիտական մտքի պահանջների արդի համապատկերում ցոյց տալ գրողի զարգացման դինամիկան, բացայայտել անհատի պետրոսեանական մոդելը եւ վիպակում արծարծուած գաղափարները մօտեցնել ներկային ու հասանելի դարձնել բոլորի համար։

Նպատակը՝ բացայայտել Վարդգէս Պետրոսեանի վիպակի գեղարուեստական առանձնայատկութիւնները եւ դրանք ծառայեցնել անհատի գաղափարական զարգացմանը եւ կեանքի անխոչընդոտ ընթացքին։

Հետազօտութեան գիտական նորոյթն այն է, որ գրականագիտական վերլուծութիւնից զատ, փորձել ենք ցոյց տալ վիպակի դաստիարակչական նշանակութիւնը։

«Ապրած եւ չապրած տարիներ» վիպակում հեղինակը քննում է հասարակական մի շարք իրողութիւններ եւս եւ ձգտում է բացայայտել մարդու ակտիւ կենսական դիրքորոշումը եւ նրա պարտքը ոչ միայն հասարակութեան, այլեւ սեփական խղճի ու անձի առջեւ։

«Ապրած եւ չապրած տարիներ» վիպակը լոյս է տեսել 1970 թուականին։ Այն գրողի ամենաարդիական ստեղծագործութիւնը կարելի է համարել, որն օր օրի աւելի մեծ հռչակ է ձեռք բերում։ Այն փիլիսոփայական գործ է, որի ամէն տողում թաքնուած է գրողի՝ կեանքի փիլիսոփայութեան ըմբռնումը։ Եթէ «Հայկական էսքիզներ»-ն աչքի է ընկնում իր հայրենասիրական ծաւալումներով, ապա «Ապրած եւ չապրած տարիներ»-ը բոլորովին նոր աշխարհներ բացեց ընթերցողի առաջ։ Այն մեծ ընդունելութեան արժանացաւ յատկապէս երիտասարդութեան կողմից եւ կարճ ժամանակում ընթերցողների հսկայական բանակ ձեռք բերեց։ Վիպակի տողերից շատերը դարձել են թեւաւոր խօսքեր, որովհետեւ դրանք չափազանց հարազատ են իւրաքանչիւրիս ներաշխարհին։

[1] **Վ. Պետրոսեան**, Յոյսի՞, թէ յուսահատութեան զրականութիւն։ Յոյսի՛..., «Գրական թերթ», 1982, հ. 42, էջ 1։

«Ապրած եւ չապրած տարիներ» վիպակը շարունակում է զարգացնել երիտասարդութեանը նուիրուած թեման։ Մարդու բարոյական արժէքների ու դրանց կորստեան թեման է, որ Վարդգէս Պետրոսեանը բերեց գրական դաշտ։ «Ապրած եւ չապրած տարիներ» վիպակում հեղինակը դառնում է գրող-հոգեբան։ Նա ոչ միայն ներկայացնում է իր հերոսների կեանքը, այլեւ փորձում է վերլուծաբար մօտենալ նրանց քայլերին։ Վիպակի գլխաւոր հերոսը Լեւոն Շահինեանն է։ Մասնագիտութեամբ լրագրող է, խելացի ու ծանրակշիռ անձնաւորութիւն։ Հետաքրքիրն այն է, որ հեղինակը չի դիմում իր հերոսների նկարագրութեան եղանակին, այլ նրանց բացայայտում է տարբեր իրավիճակներում։ Վարդգէս Պետրոսեանը օբյեկտիւ վերաբերմունք ունի իր հերոսների նկատմամբ, նրանց չի տարբերակում ըստ լաւ կամ վատ յատկանիշի։ Նրա հերոսները «բազմաթիւ անյայտներով հաւասարումներ» են, որոնց «լուծման» հնարաւորութիւնը միշտ տրւում է ընթերցողին։ Հերոսներից իւրաքանչիւրն ունի իր կորցրած տարիները։ Լեւոնի կերպարի առանձնայատկութիւնների մասին բացատրում է հեղինակն ինքը. «Իր մօտ ե՛ւ կասկածամտութիւն կայ, ե՛ւ մի քիչ անձնասիրութիւն, եւ նոյնիսկ քամահրական մի բան էլ կայ կեանքի նկատմամբ։ Ի վերջոյ նա հերոս է, որ իտէալ ունի, հաւատում է մարդու հոգեկան բարութեանը եւ ուզում է մաքառել դրա համար»[2]։

Լեւոնին յանձնարարուած է գնալ Հայաստանի գիւղերից մէկը եւ յօդուած գրել ինքնասպան եղած դպրոցական սիրահար զոյգի մասին։ Սա է հիմնական մեխը, որի շուրջ հեղինակը հիւսում է իր վիպակի գործողութիւնները։ «Այդ ողբերգութիւնը՝ 20-րդ դարի երկրորդ կէսի ֆոնին, մի ժողովրդի մէջ, որ 2000 տարի առաջ թատրոն է ունեցել, որ նոյն այդ գիւղի մօտ հիմա ատոմային ելեկտրակայան է կառուցում,- սա է մեխը, միայն թէ այն պէտք է ոչ թէ խփել պատի մէջ, այլ դուրս քաշել պատից, գոնէ կէսը»[3]։ Այս ամէնի իրագործման ճանապարհին Վարդգէս Պետրոսեանը քննում է հասարակական տարբեր շերտեր, տարիքային տարբեր խմբեր, ժամանակներ եւ միջավայրեր։ Նրա գլխաւոր հերոսը իր իսկ մարմնաւորումն է։ Վիպակը ծայրից ծայր հակադրութիւնների շղթայ է, որտեղ իրար են հակադրւում անցեալն ու ներկան, քաղաքային ու գիւղական միջավայրերը, հերոսները, անգամ հերոսի ներաշխարհում են նկատելի դրանք։ Լեւոնի համար միայնութիւնը աւելի նկատելի դարձաւ եղբօր՝ Վահրամի մահից յետոյ, սակայն ոչ թէ եղբօր ֆիզիկական բացակայութիւնը նպաստեց դրան, այլ նրա կորստով Լեւոնն սկսեց արժեւորել կեանքը։ «Ամէն մօտիկ մարդու մահով մեռնում է նաեւ մեր մի մասը։ Բայց ամէն մօտիկ մարդու մահ մեզ նաեւ պարտաւորեցնում է ապրել նրա չապրած տարիները»[4]։ Վահրամի ու Լեւոնի կերպարներում հակադրական պատկերի ստեղծմամբ հեղինակը միտում ունի բացայայտելու ճշմարիտ ապրելու խորհուրդը։ Վահրամը բազմաշերտ կերպար է վիպակում, որ իր մահով խորհրդանշում է կեանքը լիարժէք ապրելու պահանջը։ Սակայն եղբօրը կորցնելուց յետոյ միայն Լեւոնը սկսեց հասկանալ ու գնահատել նրան. «Սուտ է, արիւնը գլխաւորն է մարդու մէջ, բախտորոշ րոպէներին արիւնն է քուէարկում։ Մի շաբաթ առաջ կարող էր մտածել, թէ կեանքը հնարաւոր է առանց արիւնակիցների, թէ պայմանական բաներ են բոլոր այս յարաբերութիւնները քսաներորդ խելագար դարում, որ հեռացնում է մարդկանց իրարից, նրանց մէջ քաշելով պատեր, վարագոյրներ, միջնորմեր՝ նրանց արանքում սառնարաններ դնելով»[5]։

---

[2] **Վ. Պետրոսեան**, Սփիւռք-Հայրենիք, Երեւան, 2012, էջ 95։

[3] **Վ. Պետրոսեան**, Վիպակներ եւ պատմուածքներ, Երեւան, 1980, էջ 235։

[4] Նոյն տեղում, էջ 294։

[5] Նոյն տեղում, էջ 247։

Վարդգէս Պետրոսեանն իր ընթերցողին սովորեցնում է աւելի ամուր կապերով կապուել սիրելիներին, գնահատել նրանց հետ անցկացրած ամէն մի վայրկեանը. «Ու ես հասկացայ, որ աշխարհում ոչինչ չես գտնի երկրորդ անգամ եւ դրա համար ուզեցի գոռալ իմ ծաղկային ամբողջ ձայնով. «Մի՛ կորցնէք, մարդի՛կ»[6]:

Պետրոսեանական գրիչն օգնում է նորովի նայել կեանքին ու վերաարժեւորել այն: «Ապրած եւ չապրած տարիներ» վիպակում շատ աւելի ցայտուն է կենսագրական տարրը: Վիպակը նուիրուած է հեղինակի եղբօր՝ Կարօ Պետրոսեանի յիշատակին: Հեղինակի կենսագրութեանը քաջատեղեակ ընթերցողն անպայմանօրէն կը նկատի Լեւոն-Վահրամ եւ Վարդգէս-Կարօ զոյգերի ընդհանրութիւնները: Վարդգէս Պետրոսեանի եղբօրը ժամանակին ձերբակալել են Բաֆֆի կարդալու պատճառով: Այս կենսագրական տարրը հեղինակը զետեղել է իր վիպակում: Վահրամին ձերբակալում են բանաստեղծութիւններ գրելու եւ Չարենց կարդալու պատճառով: Վարդգէս Պետրոսեանը սրանով անդրադառնում է Ստալինեան բռնապետութեան տարիներին: 60-ականների գրական սերունդը սկիզբ առաւ այդ տարիների մոխիրներից, կարողացաւ վերակենդանացնել գրական կեանքը ու գաղափարական ազատութիւն սերմանել մարդկանց մէջ: Այս գրական սերունդը հէնց Լեւոնի ասած «միջանկեալ» սերունդն էր. «Ծանր է լինել միջանկեալ սերունդ, լինել կամուրջ՝ շատ նեղ առուի, որի վրայով անցնում են միայն թոշակառուները, ջահելները թռչում են, չնկատելով կամ արհամարհելով կամուրջը»[7]: Հէնց այս սերնդի ուսերին էր դրուած նոր գրականութիւն կերտելու պահանջը, ինչը լաւագոյնս կարողացաւ կատարել: Վիպակում հեղինակն անդրադառնում է տատի կերպարին. «Տա՛տը... Երբ նա գրկում է իրեն, կարծես յանկարծ ձեռքեր է ստանում ծեր սալորենին»[8]: Մէկ այլ ինքնակենսագրական տարր է այն երիտասարդական թերթը, որին անդամակցում է Լեւոնը: Թէեւ թերթի անունը չի նշում հեղինակը, բայց մեր կարծիքով դա «Գարուն» ամսագիրն է:

Վիպակի հանգոյցը դպրոցական սիրահարների՝ Սերոբի եւ Յասմիկի ինքնասպանութիւնն է: Նրանց համբոյրի լուրը մի վայրկեանում տարածւում է ամբողջ գիւղով մէկ: Սակայն ոչ թէ սէրն է կործանում նրանց ճակատագիրը, այլ գիւղական յետամնաց բարքերն ու կարծրատիպերը: Այս երեւոյթի դէմ գրական լուռ պայքար առաջ եկաւ, որին իրենց գրչով միացան Համաստեղը՝ իր «Համբոյրը» պատմուածքով, Յովհ. Թումանեանը, որ այս մասին առաւելապէս խօսեց «Անուշ» պոեմում, իսկ յետոյ նաեւ Վարդգէս Պետրոսեանը: Լեւոնի համար անհասկանալի էր տեղի ունեցածը. «Ուրեմն սովորել էք իրար հետ, մեծացել եւ չէք գնացել վերջին անգամ տեսնելու... Ես ի՞նչ խօսեմ ձեզ հետ, ինչի՞ մասին, ինչի՞ համար...»[9]: Դասարանը դարձել էր մի կառավարուող զանգուած, որ չէր կարող շարժուել իր սեփական կամքով: Սրանով հեղինակն անդրադառնում է անհատի պաշտամունքի տարիներին եւ նրա թողած կործանիչ հետքերին: Այս երեւոյթը եղել է եւ կը լինի բոլոր ժամանակներում: Մարդու համար հրամաններին ենթարկուելը դառնում է կենսակերպ, իսկ ամենահեշտ կառավարելի մարդը սեփական կարծիք չունեցողն է: Նրանք, ովքեր դէմ են դուրս գալիս «երեւելիներին», արժանանում են Սերոբի ու Յասմիկի ճակատագրին. «Խե՜ղճ, միամի՜տ գերեզմաններ, կարծում էք դուք

[6] Նոյն տեղում, էջ 55:

[7] Նոյն տեղում, էջ 246:

[8] Նոյն տեղում, էջ 199:

[9] Նոյն տեղում, էջ 209:

ինչ-որ բա՞ն ապացուցեցիք աշխարհին, ծիծաղելի գերեզմաններ»[10]։ Վարդգէս Պետրոսեանն ազատատենչ գրող է։ Նրա համար չկար աւելի արժէքաւոր բան, քան խօսքի ու իրաւունքի ազատութիւնը։ Նա իր գրական ու հրապարակախօսական գործունէութեամբ պայքարեց ոչ միայն երիտասարդութեան, այլեւ համամարդկային ազատութեան համար։

Վարդգէս Պետրոսեանի գրականութեան պատկերային միջավայրը քաղաքային կեանքն է։ Սակայն քաղաք ասելով՝ չպէտք է հասկանալ զուտ աշխարհագրական վայր։ Նա միայն քաղաքային կեանքի պատկերում է տեսնում ժամանակի ծնած նոր մարդուն։ Հէնց այս յատկանիշով են գրական աւազանում հակադրելի Հրանդ Մաթեւոսեանն ու Վարդգէս Պետրոսեանը։ Հրանդ Մաթեւոսեանը գրականութիւն բերեց պարզ ու հասարակ գիւղացուն՝ կերտելով գիւղական կեանքի լաւագոյն պատկերները։ Այս հանգամանքը գուցէ պայմանաւորուած էր երկու գրողների ծննդավայրերի տարբերութեամբ։ Երկուսի մօտ էլ առկայ է սուր հակադրական դաշտը, որտեղ Հրանդ Մաթեւոսեանը, ընտրելով գիւղի կուսական աշխարհը, նպատակ ունի մարդուն մօտեցնելու բնութեանը ու դարձնելու նրա նման մաքուր ու պարզ։ Դաւիթ Գասպարեանն այս մասին գրում է. «Նա բնութեան ձայնին հաւատարիմ մնալու պրոբլեմն է արծարծում եւ բնութեան ձայնը, բնական վիճակը հակադրում քաղաքակրթութեանն ու նրա բերած կուլտուրական միջամտութեանը»[11]։ Հրանդ Մաթեւոսեանն իր ստեղծագործութիւններում պատկերում է յետպատերազմեան շրջանի գիւղը եւ սուր հակադրութիւնների մէջ է դնում քաղաքի ու գիւղի մարդուն, ինչն աւելի մուգ երանգներ է գտել նրա «Բեռնաձիեր» շարքում։ Վարդգէս Պետրոսեանը, ի սկզբանէ ընտրելով քաղաքային միջավայրը, նպատակ չունէր հակադրական նժարների վրայ դնելու այս երկու միջավայրերը, այլ պարզապէս հակուած էր այն տեսակէտին, որ արդիականութեան նոր դրսեւորումներ շատ աւելի հեշտ է գտնել քաղաքային միջավայրում։ Եւ իրաւացի էր գրողը, ինչն ակնյայտ երեւում է «Ապրած եւ չապրած տարիներ» վիպակում։ Սերոբի եւ Յասմիկի ինքնասպանութիւնը հեղինակը քննում է՝ կողք կողքի դնելով քաղաքային ու գիւղական միջավայրերի իրարամերժ ընկալումները։ Այս երկու միջավայրերի հակադրութիւնը հեղինակն աւելի է սրում Լեւոնի՝ գրականութեան ուսուցչի եւ տնօրէնի հետ ունեցած զրոյցում. «Ի՞նչ սէր, ի՞նչ բան, նրանց ի՞նչ ժամանակն էր։ Եւ յետոյ էլ՝ ինքնասպանութիւն, բա որ արտասահմանի բերանն ընկնի, ո՞վ պիտի պատասխան տայ, դու՞ք»[12]։ Մարդկային կեանքի արժեզրկման եւ աշխարհի անտարբերութեան համամարդկային երեւոյթն է քննում հեղինակը։ Իւրաքանչիւրը մտածում է իր մասին, իսկ դիմացինի ողբերգութիւնը մնում է լոկ նրանը։ Այս երեւոյթի լաւագոյն բացատրութիւնը տուեց Պարոյր Սեւակը.

Սիրում է կեանքում նա իր աթոռը,

Աթոռն է սիրում ու նրան տիրում[13]։

Սակայն շատ աւելի հիասթափեցնող էր գրականութեան ուսուցչի տուած պատասխանը. «Ախր փոխանակ դասերով զբաղուելու, սիրում են։ Էնքան սիրահարներ եմ տեսել պսակւում են, մի ամիս յետոյ երեխայ են ունենում, երկու ամսից բաժանւում են։ Սա էլ գրականութեան դասատուն, որ հարիւր անգամ երեւի պատմած պիտի լինի Սո-

[10] Նոյն տեղում, էջ 241։

[11] **Դ. Գասպարեան**, Հերոսի խնդիրը ժամանակակից առձակում, Սովետական գրականութիւն, 1976, № 5, էջ 131-132։

[12] **Վ. Պետրոսեան**, Վիպակներ եւ պատմուածքներ, Երեւան, 1980, էջ 180։

[13] **Պ. Սեւակ**, Երկերի ժողովածոյ, 6 հատորով, հատ. առաջին, Երեւան, 1972, էջ 175։

սի ու Վարդիթերի, Ռոմէոյի ու Ճուլիէթի ողբերգական սիրոյ մասին»[14]: Երկու միջավայրերի հակադրութիւնը եւ միեւնոյն ժամանակ անհատի եւ իրականութեան բախումն է պատկերում հեղինակը: Միջավայրը կարող է պատճառ դառնալ նոյնիսկ մարդկային ամենանրբին զգացմունքի՝ սիրոյ մերժման համար: Սակայն քաղաքում այս պատմութիւնը բոլորովին այլ արձագանք է ստանում. «Դա՛,- ծոր տուեց խմբագիրը,- անհաւատալի բաներ ես պատմում: Մեր օրերում՝ զարմանալի է, չգիտեմ ինչ ասեմ[15]:

Սիրահարների գերեզմանների կողքին հեղինակը բերում է նոր կառուցուող ատոմային կայանի պատկերը: Մենք մեր ձեռքը պարզում ենք նորին, բայց հայեացքով միշտ հնին ենք կառչած: Հեղինակը հակադրում է ոչ միայն գիւղական ու քաղաքային մտածելակերպը, այլեւ սոցիալական պայմանները. «Այսպիսի հեռախօս Լեւոնը վերջին անգամ տեսել էր «Զապաեւ» կինոնկարում»[16], կամ «Զեմ մնայ,- ասաց Տաթեւիկը,- դու պատկերացնու՞մ ես, կինո անգամ չկայ, բաղնիք չկայ, պիտի ապրեմ ինչ-որ մէկի տանը, ձմեռը աթար են վառում, ելեկտրականութիւն տալիս են երեկոյեան ութից, դիրեկտորի անունը Աղաբեկ է»[17]: Սակայն ընթերցողին թող չթուայ, թէ հեղինակը ծաղրում կամ քննադատում է գիւղական միջավայրը: Նա պարզապէս պատկերում է այն, ինչ կար երէկ եւ կայ նաեւ այսօր: Եւ ցաւով է պատկերում գիւղական կեանքի դժուարին պայմանները: «Բակում ամայի լռութիւն էր, որին կարօտ են աշխարհի բոլոր քաղաքաբնակները եւ որից զզուած են բոլոր գիւղերում»[18]: Հեղինակը պարզապէս ապահովում է նկարագրական դաշտը, իսկ հետեւութիւններն ու նախընտրութիւնը թողնում է ընթերցողին: Վիպակում այս հակադրական շղթան սկզբից մինչեւ վերջ ձգւում է եւ կարելի է շարունակ օրինակներ բերել, բայց սահմանափակուենք այսքանով:

Ռեստորանում պատահած միջադէպը առիթ տուեց Լեւոնին համեմատական եզրեր անցկացնելու երեք սերունդների միջեւ: Միջադէպը միջոց դարձնելով՝ Վարդգէս Պետրոսեանը մարդկային բարձրագոյն արժանիքների անկումն է նշմարում երիտասարդ սերնդի մէջ: Երբեմն անհրաժեշտ է ոչ թէ մէկին, այլ ողջ մարդկութեանը սթափեցնող ապտակ հասցնել, որը կը ստիպի նրանց արժեւորել կարեւորը. «Ո՛չ, արիւնը սրբութիւն է, աւելի, քան կիսաքանդ վանքերը, քան մագաղաթները: Ծիծաղել արեա՞ն վրայ, ո՛չ»[19]: Սա հեղինակի արծարծած այն բազմաթիւ թեմաներից է, որն այսօր առաւել քան արդիական է: Մեր պարտքն է գնահատել հայրենիքի համար թափուած արեան իւրաքանչիւր կաթիլը եւ այդ հողին վերաբերուել ոչ թէ զուտ տարածքի, այլ սրբավայրի: Լեւոնի նպատակը ծափահարութիւններ ու կենացներ վաստակելը չէր: Նրա մէջ արթնացաւ Պետրոսեանի ըմբոստ ու հայրենասէր ոգին, որ կտակեց յետագայ սերունդներին:

Վարդգէս Պետրոսեանի ոճական առանձնայատկութիւններից մէկն այն է, որ հեղինակը չի փորձում երկար-բարակ շարադրել իր մտքերը, չի դիմում բառերի տեղի-անտեղի շահարկութեանը, այլ ձգտում է հնարաւորինս պարզ, բայց միեւնոյն ժամանակ այնքա՜ն գեղեցիկ շարադրել իր մտքերը: «Պիտի գտնել զուսպ բառեր, քիչ ու խիտ: Քիչ: Լեւոնի համար գրելը նման էր հեռու ճանապարհ գնալուն, երբ փոքր ճամպրուկ ես վերցնում՝ միայն ամենահարկաւոր բաները տանելու համար: Գտնել ամենակարեւոր բա-

[14] **Վ. Պետրոսեան**, Վիպակներ եւ պատմուածքներ, Երեւան, 1980, էջ 212:
[15] Նոյն տեղում, էջ 229:
[16] Նոյն տեղում, էջ 204:
[17] Նոյն տեղում, էջ 228:
[18] Նոյն տեղում, էջ 207:
[19] Նոյն տեղում, էջ 209:

ռերը, սեղմել դրանք նախադասութիւն-ճամպրուկի մէջ, բայց չտափակեցնել»[20]։ Այս յատկանիշը մեծ առաւելութիւն է գրողի համար, որովհետեւ շատ յաճախ, քննարկուող թեման ընթերցողի համար երկն այնքան սիրելի չի դարձնում, որքան գրողի մատուցման եղանակը։

Վարդգէս Պետրոսեանի ստեղծագործութիւններն օրգանապէս կապուած են իրար, եւ թւում է, որ եթէ բոլոր վիպակները միացնենք իրար, կը ստացուի սահուն սիւժէով, լայնածաւալ վէպ։ Նա այնքան պարզ եւ միեւնոյն ժամանակ այնքան խորն է արտայայտում իր մտքերը, որ երբեմն դժուար է որեւէ բան աւելացնելը կամ բացատրելը։ Հեղինակն իր ստեղծագործութիւնը համեմել է հաճելի երգիծանքով. «Աշոտի աչքերն այդ պահին կարելի էր մի լաւ ռեկլամ սարքել՝ հետաքրքրասէրների ակումբի համար»[21]։ Նա անգամ ամենացաւալի իրավիճակին խառնում է մի քիչ հումոր կեանքի դժուարութիւններն աւելի թեթեւ յաղթահարելու համար։

Հարկ ենք համարում խօսել ստեղծագործութեան վերնագրի եւ նրա ենթախորքերի շուրջ եւս։ Իր վիպակին տալով այս վերնագիրը՝ հեղինակը կերպարների ճակատագրերի միջոցով փորձում է որոշակիօրէն նշմարել ապրած եւ չապրած տարիների սահմանագիծը. «Ի՞նչ տարբերութիւն ապրած եւ չապրած տարիների, ի՞նչ տարբերութիւն այս օդի, ծաղիկների, ջրերի, փողոցների ու աշխարհի համար՝ դու՞ ես, թէ մէկ ուրիշը»[22]։ Կեանքը միշտ սլանում է իր բնականոն ընթացքով, ուրիշի վշտի նկատմամբ անհաղորդ լինելը ոչ թէ մարդկային անտարբերութեան, այլ կեանքի ռիթմից չշեղուելու արդիւնքն է։ Վարդգէս Պետրոսեանը մարդու ֆիզիքական գոյութեամբ չի պայմանաւորում նրա ապրած տարիների քանակը։ Նա Վահրամի օրինակով ապացուցում է իր ընթերցողին, որ եթէ անգամ մարդը ողջ է, դա դեռ չի նշանակում, թէ նա ապրում է այդ տարիները, որովհետեւ Լեւոնն ինքն է խոստովանում. «Ում էր պէտք այս ուշացած յայտնագործութիւնը, երբ իր կողքին ապրեց, վերջացաւ եղբայրը»[23]։ Հերոսներից իւրաքանչիւրն ունի իր ապրած ու չապրած տարիները, բայց դժբախտաբար, շատ յաճախ չապրած տարիներն աւելի գերակշիռ տեղ են գրաւում մարդու կեանքում։

Յասմիկի ու Սերոբի օրինակով հեղինակը ցոյց է տալիս ապրած եւ չապրած տարիների զուգորդական ուղին։ Կենդանութեան օրօք նրանք չապրեցին իրենց յատկացուած տարիները, սակայն մահուանից յետոյ կ՚ապրեն դրանք՝ թումանեանական անմահ սիրոյ գաղափարի խորհուրդը կրելով։ Մարդու ֆիզիքական գոյութեան ընթացքում չապրած տարիների պատճառ է դառնում շարունակ ապագայի տեսլականով ապրելը, ինչի արդիւնքում անտեսւում է ներկան։ Որպէսզի մարդը չկորցնի իր ապրելիք տարիները, հեղինակը տալիս է դրա բանալին. «Մարդը իր կեանքի ամէն օրը պիտի ապրի այնպէս, ինչպէս եթէ դա իր կեանքի վերջին օրն է. պիտի հասցնի սրիկային ասելու, որ նա սրիկայ է, պիտի հասցնի ատել, սիրել, հաւատալ։ Վաղը կարող է ուշ լինել»[24]։ Հեղինակը հակադրական բեւեռների վրայ է դնում մարդու ապրած եւ չապրած տարիները՝ մէկ բերելով ապրածի ժխտումը, մէկ չապրածի։ Չապրած տարիները մեզ զրկում են կեանքի լաւագոյն պահերից, իսկ ապրած տարիները դառնում են բեռ, որ կրում ենք մինչեւ մեր կեանքի աւարտը. «Ձիւն լինէր՝ արձակ ու փափուկ լռութիւն, չլինէր ապ-

[20] Նոյն տեղում, էջ 235։

[21] Նոյն տեղում, էջ 234։

[22] Նոյն տեղում, էջ 222։

[23] Նոյն տեղում, էջ 291։

[24] Նոյն տեղում, էջ 296։

րած տարիների բեռը, չզգար, չզգար»[25]: Սակայն չպէտք է հետեւութիւն անել, թէ մեր ապրած բոլոր տարիներն են բեռ դառնում: Մարդու համար բեռ են դառնում նրա գործած սխալները, այն տարիները, որոնց արանքներում մենք թողնում ենք հարազատ մարդկանց եւ նրանց հետ կապուած հաճելի յիշողութիւններ, որոնք թէեւ ժամանակին մեզ երջանկացրել են, բայց յիշողութիւն դառնալուն պէս սկսում են ցաւեցնել հէնց միայն այն բանի համար, որ էլ չեն կրկնուելու:

Հեղինակը մարդու կեանքի տարիները համեմատում է այրուած լուցկիների հետ, որոնց ժամանակը շարում է իրար վրայ, իսկ վերջում մարդկային կեանքը վերածւում է այրուած հատիկներով լի լուցկու տուփի. «Լուցկու այրուած հատիկը կարող ես եւ փողոց նետել, ապրած օրերդ մնում են: Ու մի օր էլ՝ կեանքդ դառնում է լուցկու տուփ՝ միայն այրուած հատիկներով»[26]: Վարդգէս Պետրոսեանը փիլիսոփայական, վերացարկուած կերպով է խօսում ապրած եւ չապրած տարիների մասին: Նա չապրած տարիները գործածում է փոխաբերական իմաստով՝ որպէս մարդկային դժբախտութեան արդիւնք:

«Ապրած եւ չապրած տարիներ» վիպակում հեղինակը յաճախ է դիմում վերյուշի եղանակին: Յիշողութիւնների միջոցով անցեալը բերում ու կապում է ներկային. «Անցած կեանքը նման է հին ջրաղացի. կայ հոսող ջուր, կան ջրաղացներ, իսկ տարիները ցորեն են կուտակել՝ ինչքան ուզես: Բաւական է հասարակ մի հանդիպում, որ իրար առնեն ծանօթ հայեացքները, եւ ջրաղացքարերը կը սկսեն պտտուել. ցորենն ալիւր կը դառնայ, կեանքը կը լցուի անցած օրերի աղմուկներով»[27]: Մեզ երջանկացնում ու տխրեցնում են մեր անցած կեանքի յիշողութիւնները, որոնք գոյանում են ապրած եւ չապրած տարիների ծալքերում: Վիպակը հեղինակն աւարտում է հէքեաթի եղանակով, որն օգտագործեց նաեւ Գուրգէն Մահարին իր «Այրուող այգեստաններ»-ում: Լեւոնը տեղափոխւում է հէքեաթային աշխարհ, որտեղ մայթը դառնում է անտառային կածան եւ նրան ուղեկցում է իր կեանքի ճանապարհով. «Գնում էր Լեւոն Շահինեանը՝ քաղաքի մի սովորական բնակիչ, աշխարհի մի աննշան անցորդ, գնում էր իր մենակութեան, իր ապրած ու չապրած տարիների միջով»[28]:

Վարդգէս Պետրոսեանն իր գրչի միջոցով պատկերեց իր ապրած ու չապրած տարիները: Նա իր ընթերցողին աւանդեց կեանքը վայելելու եւ հնարաւորինս քիչ չապրած տարիներ ունենալու բանալին: Մեծ գրողի ողբերգական վախճանը դարձաւ իր վիպակի գաղափարի հաստատումը, ըստ որի՝ մարդու գոյութեամբ չեն պայմանաւորւում նրա ապրած տարիները: Ջնայած շուտ լքելով իր օրացուցային կեանքը՝ նա շարունակում է իրար հետեւից շարել իր կեանքի ապրուող տարիները՝ թողած գրական ժառանգութեան եւ յաւերժ արդիական մտքերի շնորհիւ: Վարդգէս Պետրոսեանը գրեց իր ընթերցողին ապրեցնելու միտումով:

ՆՈՒՆԷ ՎԱՐԴԱՆԵԱՆ

Մագիստրոս, Ուսուցչուհի «Երեւակ» կրթահամալիրի

[25] Նոյն տեղում, էջ 232:
[26] Նոյն տեղում, էջ 317:
[27] Նոյն տեղում, էջ 248:
[28] Նոյն տեղում, էջ 321: